Մրցույթի հայտարարություն

«ՀՀ Տավուշի մարզի Չինչինի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

2026 թ. Օգոստոսի 24

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգի 2-րդ, 4-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Տավուշի մարզի Չինչինի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1)Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.
2) Հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր).
3) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 21-րդ և 22-րդ մասերով սահմանված հիմքերի բացակայությունը (ձև N 2):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ լիազոր մարմնի ղեկավարի անունով.
2) անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
3) հաստատության ղեկավարման իրավունքի՝ հավաստագրի պատճենը.
4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.
5) ինքնակենսագրություն (ձև N 3):

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ, իսկ էլեկտրոնային եղանակով (tavush.andznakazm@mta.gov.am,) փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝ բնօրինակները ներկայացնել մրցույթի օրը:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնում (ք. Իջևան Սահմանադրության 1) **2026 թվականի օգոստոսի 24-ից մինչև 2026 թվականի սեպտեմբերի 11-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից մինչև ժամը 13:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Ձև N 2

Հայաստանի Հանրապետության
Տավուշի մարզպետ պարոն Հ.Ղալումյանին

3x4

լուսանկար

_____ -ից
դիմողի անունը, հայրանունը, ազգանունը

_____
դիմողի հաշվառման վայրը

_____
դիմողի հեռ. (աշխ., բնակ., բջջ.)

_____
անձնագրի կամ նույնականացման քարտի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել

ծնված _____
օրը, ամիսը, տարին, վայրը

Դ Ի Մ ՈՒ Մ

Ծանոթացել եմ _____ _____

(լիազոր մարմնի անվանումը)

կողմից_____

(հանրակրթական ուսումնական հաստատության անվանումը)

պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ տնօրենի հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու մասին հայտարարությանը:

Իմ մասին հայտնում եմ.

Քաղաքացիությունը

_____
(Հայաստանի Հանրապետության, իսկ երկքաղաքացիության դեպքում՝ նշել կարգավիճակի ստացման ժամկետը և երկիրը)

Դատարանի օրինական ուժի մեջ դատավճռի հիման վրա

_____
(դատապարտվել եմ, չեմ դատապարտվել)

Սահմանված կարգով չհանված կամ չմարված դատվածություն

_____
(ունեմ, չունեմ)

Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ

_____
(ճանաչվել եմ, չեմ ճանաչվել

Դատական կարգով մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից

_____
(զրկվել եմ, չեմ զրկվել)
Մանկավարժական կամ վարչական գործունեության կատարմանը խոչընդոտող հիվանդությամբ

_____
(փառապում եմ, չեմ փառապում)

Հարուցված քրեական հետապնդումը
_____
(դադարեցվել է, կամ չի իրականացվել ոչ արդարացնող հիմքով)

Կուսակցության ու նրա տարածքային ստորաբաժանումների ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների
_____
(անդամ եմ, անդամ չեմ)

Նույն հաստատության տնօրենի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր, քույր) կապված
_____
(անձ եմ, անձ չեմ)

Համակարգչային գրագիտությունը

_____

_____
(փիրապետման մակարդակը, համակարգչային ծրագրերի իմացությունը)

Նախազգուշացված եմ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող _____ ___ _____2026 թ.
ստորագրություն

ՁԵՎ N 3

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անունը, հայրանունը, ազգանունը	
Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը	
Ծննդյան վայրը, երկիրը	
Հաշվառման բնակավայրը	
Մշտական բնակավայրը	
Քաղաքացիությունը	
Այլ քաղաքացիություն, եթե կա	
Ընտանեկան դրությունը (պարտադիր չէ պատասխանել)	
Օտար լեզուների իմացությունը. բանավոր (նշել լեզուն և իմացության մակարդակը՝ վատ, բավարար կամ լավ)	
Օտար լեզուների իմացությունը. գրավոր (նշել լեզուն և իմացության մակարդակը՝ վատ, բավարար կամ լավ)	
Ուսումնառությունը, կրթությունը. (թվել կրթօջախները, տարիները, մասնագիտությունը (մասնագիտությունները)	
Աշխատանքային գործունեությունը. (թվել աշխատավայրը (աշխատավայրերը), տարիները, պաշտոնը (պաշտոնները)	
Մասնագիտական ոլորտներում գործունեության փորձի նկարագիրը. (թվել հիմնարկը (հիմնարկները) կամ կազմակերպությունը (կազմակերպությունները), տարիները, մասնագիտությունը (մասնագիտությունները)	
Վերապատրաստումները. (թվել տարիները, ծրագրերը, մասնակցության կարգավիճակը)	
Այլ տեղեկություններ. (գիտական հոդվածներ, մենագրություններ, պետական, կառավարական և այլ պարգևներ: Հնարավորության դեպքում նշել համացանցային հղումները)	
Այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ եք համարում տրամադրել	
Հեռախոսահամար	
Էլեկտրոնային հասցե	
Փոստային հասցե	
Անհատական բլոգը կամ համացանցային էջը (առկայության դեպքում)	